ՀՏԴ 947.925

Doi:10.54503/0135-0536-2024.1-234

# ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՄԱԾՆԱԲԵՐԴ ԱՄՐՈՑԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**Բանալի բառեր՝ Մածնաբերդ, Տավուշ, Այգեձոր, Աղջկաբերդ, միջնադար, հուշարձան, պեղումներ, գտածոներ:**

**Նախաբան**

*Մածնաբերդ ամրոցը Հայաստանի հյուսիսարևելյան շրջանների կարևոր ամրություններից էր: Միջնադարյան պատմիչները բազմիցս հիշատակել են հուշարձանի մասին՝ առանց նշելու նրա տեղը:*

*Մատենագիր աղբյուրներում Մածնաբերդն առաջին անգամ հիշատակվում է սելջուկյան արշավանքների կապակցությամբ: Կյուրիկե Բ-ին հաջորդած նրա երկու որդիները՝ Դավիթն ու Աբասը, Լոռի-Տաշիրը գիջում են սելջուկներին՝ փոխարենը ստանալով նախկինում Կյուրիկյաններին պատկանած Տավուշը, Մածնաբերդը և այլ շրջաններ. «Եւ յետ մահուան նորա որդիք իւր դաւեալք ի վրաց, ելեալ ի տանէ հայրենեաց, գնացին ի պարսիկս Դաւիթ և Աբաս, եւ առնուն ի նոցանէ իժառանգութիւն զՏաւուշ եւ զՄածնաբերդ եւ զայլ տեղիս»[1]: Նրանց տիրույթներն ընդգրկում էին Տավուշ և Ախնջի գետերի վերին հոսանքի ավազանները, որոնց կենտրոններն էին Տավուշ բերդն ու Մածնաբերդը: Ավագ որդուն՝ Աբասին, բաժին է հասնում Տավուշ բերդը, իսկ կրտսերին՝ Դավթին՝ Մածնաբերդը[2]:*

*Առանի կառավարիչ Կարա-Սոնկուրի (1127–1140/1141) մահից հետո նրան ենթակա շրջաններում առժամանակ տիրում է անկառավարելի և խառնակ իրավիճակ: Դրանից օգտվում է Պարսկաստանից եկած Զավլի զորապետը՝ ասպատակելով հիշյալ տարածքները: 1144 թ.՝ 40-օրյա պաշարումից հետո, Զավլին գրավում է Տավուշ ամրոցը, որտեղ նստող Աբասն ապաստանում է եղբոր մոտ՝ Մածնաբերդում[4]:*

*Տարածաշրջանին պատուհասած մոնղոլական ավերիչ արշավանքներից զերծ չի մնում նաև Մածնաբերդը: 1236 թ.՝ Շամքոր քաղաքը գրավելուց հե-*

---

** Ներկայացվել է 20. X. 2023 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. թ. Դ. Միրիջանյանը (23. XI. 2023 թ.): Ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:*

*[1] Գանձակեցի. 1961, 151–152, տե՛ս նաև Վարդան վարդապետ. 1862, 106:*

*[2] Շահնազարյան. 2017, 106:*

*[3] Զավլիի կողմից Տավուշ ամրոցի գրավման թվականի ճշգրտման մասին տե՛ս Շահնազարյան. 2017, 110–111:*

*[4] Ալիշան. 1901, 344:*

*տո, նրանք ձեռնամուխ են լինում Վահրամյաններին ենթակա բերդերի գրավմանը: Մոլար նոյինն իր զորքը բաժանում է երկու մասի, որոնցից մեկը շարժվում է դեպի հարավ-արևմուտք և շրջափակում Տերունական, Երգեվանք ու Մածնաբերդ ամրոցները. «Եւ ապա յարձակեցան ի վերայ այլ բերդիցն՝ որ ընդ իշխանութեամբն Վահրամայ, ի Տէրունականն, և ի Երգեվանքն, և ի Մածնաբերդ, զոր ունէր Կիւրիկէ Բագրատունի, որդի Աղսարթանայ»[5]:*

## Ամրոցի տեղորոշման խնդիրը

*Հետազոտողների մի մասի կարծիքով՝ Մածնաբերդն Ադրբեջանի Զովդառ գյուղից (Դաշքեսանի շրջան) հարավ-արևելք գտնվող Մլզնաբերդ ամրոցն է: Նման կարծիքի համար հիմք են հանդիսացել Մ. Բարխուդարյանցի հաղորդումները, ով այն նույնականացրել է Մածնաբերդի հետ և ներկայացրել Մլզնաբերդ կամ Մածնաբերդ ձևով[6]: Այս տեսակետին են հետևել Մ. Հովհաննեսյանը, Ս. Բարխուդարյանը, Ս. Կարապետյանը[7]: Ամրոցը նույն կերպ է ներկայացված նաև տեղանվանական բառարանում[8]:*

*Ուսումնասիրողների մյուս խումբն ամրոցը տեղորոշում է Բերդի տարածաշրջանում: Ղևոնդ Ալիշանի դիտարկմամբ՝ Մածնաբերդը եղել է Երգեվանքից ոչ հեռու. «Մերձ ի Տաւուշ և ի Զորաթան գիւղ է Խորանաշատ վանք զոր շինեաց Վանականն վարդապետ, որում հուպ էր Երգէվանից բերդն, և ոչ հեռի թուի Մածնաբերդն»[9]: Ա. Շահնազարյանը մանրամասն վերլուծել է հնավայրին առնչվող գրչագիր ու նորահայտ վիմագիր սկզբնաղբյուրները, դրանք համադրել պատմական իրադարձությունների ծավալման վայրերի հետ և իրավացիորեն եզրակացրել, որ Մածնաբերդը նույնական է Այգեձոր գյուղի մերձակայքում գտնվող Աղջկաբերդի հետ[10]: Նույն կարծիքն է հայտնել նաև Հ. Քարտաշյանը[11]: Ռ. Մաթևոսյանը ևս Մածնաբերդը նշում է Տավուշի շրջանում, սակայն առանց տեղը հստակեցնելու[12]:*

*Աղջկաբերդը գտնվում է Այգեձոր գյուղից 6 կմ հարավ-արևմուտք՝ Ախնջի գետի աջափնյա ժայռի գագաթին: Ամրոցի տեղն օժտված է բնական անառիկությամբ. հյուսիսային, հարավային ու արևմտյան կողմերից ողողում են գետի ջրերը, իսկ ամրոցակիր ժայռի բարձր (մոտ 120 մ), ուղղաձիգ պատերն այն դարձնում են միանգամայն անմատչելի (նկ. 1, նկ. 2): Ամրոցը բաղկացած է միջնաբերդից և ստորին բերդից, հասանելի է միայն արևելյան կողմից, որտեղ կառուցվել են պարիսպներ: Տեղի բնակչության շրջանում բերդն առավելապես հայտնի է Աղջկաքար անունով, որը կապված է մի ավանդազրույցի հետ: Ըստ դրա, երբ Աշոտ Երկաթն արաբների կողմից պաշարված է լինում ամրոցում, բերդականներից մի աղջիկ, իր երկար ծամերի*

---

[5] Գանձակեցի. 1961, 243:

[6] Բարխուտարեանց. 1895, 327:

[7] Յովհաննէսեան. 1870, 512–514, Դիվան հայ վիմագրության. 1982, 265, Կարապետյան. 2004, 245:

[8] Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան. 1991, 648:

[9] Ալիշան. 1855, 84:

[10] Շահնազարյան. 1990, 89–90, Շահնազարյան. 2004, 142–160, Շահնազարյան. 2017, 106:

[11] Քարտաշյան. 1993, 110:

[12] Մաթևոսյան. 1982, 102:

*մեջ մեծ քարեր դնելով, դրանք նետում է թշնամու վրա: Արաբները խուճապահար դիմում են փախուստի, որից հետո բերդի անունը մնում է Աղջկաքար*[13]*:*

Նկ. 1. Մածնաբերդ. ա. ընդհանուր տեսքը վերևից (լուս.՝ Լ. Մկրտչյանի), բ. հարավից, գ. արևելքից (լուս.՝ Հեղինակի):

## Աղջկաբերդի ուսումնասիրությունը

*Մ. Բարխուդարյանցն Աղջկաբերդը ներկայացնում է Ղըզ-ղալա անվամբ՝ այն նույնացնելով Շամիրամի (Շմեղ) բերդի հետ. «Անծանօթ է մեզ բերդից անցեալն և անունն ...: Գոնէ մենք կարծում ենք, որ Ղըզ-ղալա կոչուածն է Շամիրամայ բերդն»*[14]*: Տեղագիրն այն ընորոշում է իբրև դղյակ: Ըստ նրա՝ դագաթի շուրջ տեղ-տեղ պահպանվել են քարուկիր պատերի հետքեր, ջրավազան, իսկ արևելյան ստորոտին՝ մի եկեղեցի և գերեզմանոց*[15]*:*

*Տարածաշրջանային գիտարշավի ընթացքում՝ 1935 թ., ամրոցն ուսումնասիրել է հնագետ Կ. Ղաֆադարյանը: Նրա փոխանցմամբ՝ միջնաբերդում պահպանվել են սպիտակ քարերից կառուցված շենքի հիմքեր և այլ պատերի մնացորդներ: Գիտականն առանձնակի ճոխությամբ է ներկայացրել հատկապես ամրոցի տարածքում հանդիպած վերգետնյա հնագիտական նյութը. «Գետնի երեսից կարելի է հավաքել բրոնզե ապարանջաններ, միջնադարյան*

---

[13] *Տե՛ս* Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. *1969, 61: Նա հուշարձանը ներկայացնում է Զինարի գյուղի մոտ: Սակայն Զինարիում նման ամրոց չկա, և պնդելի է, որ խոսքն Այգեձորի Աղջկաքար բերդի մասին է:*

[14] Բ ա ր խ ո ւ դ ա ր ե ա ն ց. *1895, 433:*

[15] Բ ա ր խ ո ւ դ ա ր ե ա ն ց. *1895, 326–327:*

*դրամներ և Դվինի ու Անիի մշակույթին պատկանող կերամիկա»*[16]*: Կ. Ղաֆադարյանը հավաստում է, որ ամրոցաղիր լեռան արևելյան լանջին եղել է ստորին պարսպաշղթան: Այն ճգվել է մինչև գետափնյա տարածքները, սակայն ամբողջությամբ ավերվել է և որոշ տեղերում դրանցից երևում են միայն կրաշաղախի հետքերը:*



Նկ. 2. Ամրոցի տեղադրական հանույթ (կատ՝ Լ. Մկրտչյան):

*Ըստ բանահավաք Ի. Զանգլյանի, ամրոցի հարավային կողմում՝ հարթ լանջի վրա, եղել է գյուղատեղի, փոքր եկեղեցի և գերեզմանոց: Մեր համոզմամբ՝ տեղին է նաև բանահավաքի ենթադրությունը՝ Ախնջի գետի ամրոցամերձ հատվածում՝ գետի նեղ մասում, եղել է կամուրջ, որի միջոցով կապ է հաստատվել ամրոցի և շրջակա բնակավայրերի հետ*[17]*:*

*1990-ական թվականների սկզբներին հնագետ Հ. Եսայանի ղեկավարությամբ հնավայրի տարածքում իրականացվել են ստուգողական պեղումներ, որտեղ, ըստ արշավախմբի ղեկավարի, երևում էին կիսավեր շինության հետքեր*[18]*: Միջնաբերդում 4.6 x 4 մ չափերով պեղվող հատվածի ուսումնասիրություններով բացվել են թրծած աղյուսից կառուցված շինության քարե հիմքեր, մշակված բազալտ քարերով պատեր և այլն: Հայտնաբերված շինության հյուսիսարևելյան մասում պեղվել է թրծած աղյուսով կառուցված, բազալտի հարթ քարերով երեսպատված, 1.5 մ բարձրությամբ հարթակ: Այն կառուցվել է շինության հյուսիսային կողմում և ըստ Հ. Եսայանի՝ ծառայել է քնելու կամ իրեր պահելու համար: Պեղումների արդյունքում պարզվել է, որ կացարանի հատակը սալարկված է եղել կրաքարե հարթ սալերով:*

*Արշավախումբը պեղումներ է իրականացրել նաև միջնաբերդից հյուսիս տարածվող հարթությունում, որտեղ լի հայտ են եկել երկու հաղորդակից սենյակներ: Դրանցից առաջինը, ըստ Հ. Եսայանի, կացարան է, ուներ 9 x 8 մ չա-*

[16] *Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. 2007, 222:*
[17] *Զ ա ն գ լ յ ա ն. 2011, 31:*
[18] *Ե ս ա յ ա ն. 1994, 168–169:*

*փեր, կառուցված էր կոպտատաշ քարերով, պատերի պահպանված բարձրությունը՝ 1.5 մ, հաստությունը՝ 1.2 մ: Հ. Եսայանի հաղորդմամբ, սենյակի հատակը եղել է կրասվաղ, որոնց հետքերը տեղ-տեղ պահպանվել են: Պեղումների արդյունքում հիշյալ կացարանի հյուսիսարևմտյան անկյունում բացվել է հարակից սենյակ տանող, 1.05 մ լայնությամբ դռան բացվածք:*

*Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել են նաև տարատեսակ հնագիտական իրեր: Դրանցից որոշ տեսակների հետազոտություններին Հ. Եսայանն անդրադարձել է մի շարք հոդվածներում, կատարել տիպաբանական և ժամանակագրական դասակարգում, համադրել համաժամանակյա այլ հնավայրերից հայտնի գտածոների հետ[19]:*

*Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրոցների ուսումնասիրության նպատակով 2022 թ. ամռանը հուշարձանի տարածքում հետազոտություններ ենք իրականացրել (հնագետ՝ Տ. Ալեքսանյան, չափագրող ճարտարապետ՝ Ա. Հախվերդյան, ուղեկցորդ՝ Ա. Ապրեսյան)[20]: Դրանց շրջանակներում իրականացրել ենք տեղանքի հնագիտական տեղագննություն, պահպանված կառույցների հետազոտում, չափագրում, մանրամասների դիտարկում, ինչպես նաև՝ օդային լուսանկարահանում, որի հիման վրա կազմել ենք հնավայրի տեղագրական հանույթը:*

*Դաշտային ուսումնասիրությունների արդյունքները հիմնականում նույնական են նախորդ հետազոտողների նկարագրությունները, միաժամանակ նոր տվյալներ հաղորդելով՝ ամբողջացնում հուշարձանի վերաբերյալ եղած տեղեկությունները: Ըստ այդմ, միջնաբերդի գագաթին վավերացվել են մոտավորապես 4 x 6 մ չափերով սենյակի քարուկիր պատերի մնացորդներ (գծ. 1): Նույն տեղից հայտնաբերվել են նաև կրաքարե հարթ սալերի բեկորներ, որոնց մասին նշել է Հ. Եսայանը՝ դրանք ներկայացնելով իբրև սալարկված հատակի տարրեր: Նմանատիպ սալերից մեկը քանդակազարդ է, ցանցաձև մշակումով, որը, մեր ենթադրությամբ, ծառայել է հիշյալ սենյակի պատերի ներքին հարդարման համար (նկ. 3):*




Նկ. 3. Քանդակազարդ սալի բեկոր (չափագր.՝ Ա. Հախվերդյանի):

*Միջնաբերդից ներքև՝ մուտքից աջ, պահպանվել է ժայռին կից կառուցված ջրամբարը: Այն երեք կողմից շրջափակված է ժայռով, իսկ դիմացի հատվածը փակվել է խոշոր քարերով: Հաշվի առնելով բարդ տեղանքը՝ են-*

---

[19] *Ե ս ա յ ա ն. 1994, 168:*

[20] *Ուսումնասիրությունն իրականացվել է ԱՄՆ հայագիտական հետազոտությունների ազգային ասոցիացիայի (NAASR) ֆինանսավորմամբ իրականացված «Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրոցները» ծրագրի շրջանակներում:*

*թաղրելի է, որ ջուրը հասցրել են ոչ թե խողովակներով, այլ տեղում ամբարել են հիմնականում ժայռերին հավաքվող անձրևաջրերը:*




Գծ. 1. Միջնաբերդում պահպանված սենյակի և ջրամբարի սխեմատիկ չափագրություն (չափագր.՝ Ա. Հախվերդյանի):




Գծ. 2. Զույգ սենյակների սխեմատիկ չափագրություն (չափագր.՝ Ա. Հախվերդյանի):

*Միջնաբերդից հյուսիս՝ երկու ժայռաբլուրների միջև ընկած տարածքում, պահպանվել է երկու սենյակ: Դրանցից մեկն ունի 7.6 x 6.6 մ չափեր, կանոնավոր հատակագիծ և շարվածք՝ ի տարբերություն մյուսի, որի պատերն ավելի շատ հիշեցնում են քարակույտեր (գծ. 2):*

*Ցավոք, զառիվայր տեղանքն ու խիտ բուսածածկույթը բավական վնաս են հասցրել հուշարձանին և արագացրել շինությունների քայքայումն ու փլուզումը: Դրանով պայմանավորված՝ ներկայումս տեսանելի չեն ամրոցի տարածքում պահպանված այլ կառուցվածքներ և պաշտպանական համակարգի հատվածներ:*

## Աղջկաբերդից հայտնաբերված հնագիտական գտածոները

*Մածնաբերդից հայտնաբերված գտածոները խեցեղեն անոթների բեկորներ են[21]: Ըստ կիրառական նշանակության՝ դրանք բաժանվում են երկու մեծ խմբի՝ կենցաղային և շինարարական: Առաջին խմբի խեցեղեն հավաքածուն*

[21] *Հոդվածում ներկայացվում են Հ. Եսայանի կողմից Մածնաբերդի պեղումների ընթացքում հայտնաբերված մի շարք գտածոներ, որոնք պահվում էին ԵՊՀ հայագիտական հետազոտությունների լաբորատորիայում և տարիներ առաջ տեղափոխվել են ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի պահոց:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 1

*պարունակում է անջնարակ, տարբեր չափերի կարասների, կճուճների, ծորակավոր անոթների, թաս-քրեղանների, խփերի օրինակներ: Ըստ համեմատական նյութի՝ դրանք թվագրվում են XII–XIII դարերով, լայնորեն տարածված էին միջնադարյան Հայաստանում և հայտնի են համաժամանակյա բազմաթիվ հուշարձաններից*[22]*:*



Աղյուսակ. 1.
Խեցեղեն գտածոներ:

*Առավել հետաքրքիր են շինարարական խեցեղենի օրինակները: Հարթ և կիսաշրջանաձև կղմինդրներից բացի, պահպանվել են նաև ջնարակապատ սալերի և աղյուսների բեկորներ: Դրանք երկու տեսակի են՝ տափակ և հատած բուրգի տեսքով (նկ. 4): Սալերի մակերեսը պատված է բաց կապույտ կամ սև ջնարակով: Հ. Եսայանը մանրամասն անդրադարձել է դրանց քննությանը՝ պեղված օրինակները համադրելով այլ հնավայրերից հայտնի գտածոների հետ*[23]*: Ի. Զանգլյանի նկարագրություններից հետևում է՝ հեղինակը դրանք տեսել է իրենց տեղում, ինչից կարելի է եզրակացնել, որ մինչև նախորդ դարի*

---

[22] *Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն. 2002, 82–83, 87,* Kalantaryan, Karakhanyan, Melkonyan et all. 2009, 129–131.

[23] *Ե ս ա յ ա ն. 1994, 164–171, Ե ս ա յ ա ն. 1999, 152–157:*

*70-ականները միջնաբերդի շինության պատերը եղել են կանգուն[24]: Նման գունազարդ սալիկների օգտագործումը բավական տարածված էր միջնադարյան Հայաստանում, որոնք հանդիսանում էին ճարտարապետական կառույցների հարդարամասեր: Մածնաբերդի ջնարակած սալերի, թերևս, լավագույն զուգահեռները պահպանվել են Ոսկեպարի բերդ-աշտարակի պատերին՝ պատկերավոր տվյալներ հաղորդելով վերջիններիս կիրառության մասին[25]:*



Նկ. 4. Ջնարակած սալերի բեկորներ:

## Եզրակացություն

*Գրավոր աղբյուրներում Մածնաբերդի տեղի վերաբերյալ տվյալների բացակայությունը հանգեցրել է մի շարք տարակարծությունների: Այնուամենայնիվ, առկա տվյալների քննությունը բերում է այն համոզման, որ Մածնաբերդն Այգեձորի մոտ գտնվող Աղջկաբերդն է: Այս տեսակետը ներկայացնող հետազոտողների փաստարկներից բացի, նման վարկածի օգտին են խոսում նաև դաշտային հետազոտությունները:*

*1. «Աղջկաբերդ» տեղանունն ունի սոսկ ժողովրդական ծագում և գիտական հիմնավորում չունի: Նույնանուն բերդեր առկա են Հայաստանի բազմաթիվ վայրերում[26], որոնց անվանակոչությունը կապվում է նույնաբովանդակ ավանդության հետ:*

*2. Մատենագիր աղբյուրներում Մածնաբերդը միշտ հիշատակվում է տարածաշրջանի մյուս ամրությունների, մասնավորաբար՝ Երգեվանք և Տավուշ ամրոցների հետ: Վերջիններս գտնվում են Տավուշ և Խնձորուտ գետերի ավազանում, հանդիսացել են տարածաշրջանի պաշտպանական համակարգի կարևոր օղակներից: Պատմիչների կողմից Մածնաբերդը տարածաշրջանի մյուս ամրոցների շարքում հիշատակելը ենթադրել է տալիս, որ այն գտնվել է դրանցից ոչ հեռու և հանդիսացել այդ շղթայի մասը:*

Տիգրան Ալեքսանյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող:

[24] Զ ա ն գ լ յ ա ն. 2011, 30:

[25] Տե՛ս Կ ա ր ա պ ե տ յ ա ն, Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Հ ա կ ո բ յ ա ն և այլք. 2013, 22–23:

[26] Տե՛ս Հ ա կ ո բ յ ա ն, Մ ե լ ի ք-Բ ա խ շ յ ա ն, Բ ա ր ս ե ղ յ ա ն. 1986, 191:

**Գիտական հետաքրքրությունները՝ միջնադարյան Հայաստանի հնագիտություն: Հեղինակ է 1, համահեղինակ՝ 1 գրքերի, 26 հոդվածի:** ORCID:0000-0001-9971-1651; tigranalexanyan@yandex.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կիրակոս Գանձակեցի. 1961, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 428 էջ:

Վարդան վարդապետ. 1862, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի Վենետիկ, Ս. Ղազար, 184 էջ:

Ալիշան Ղ. 1855, Տեղագիր հայոց մեծաց, Վենետիկ, Ս. Ղազար, 106 էջ:

Ալիշան Ղ. 1901, Հայապատում, հ. Բ-Գ, Վենետիկ, Ս. Ղազար, 418 էջ:

Բարխուտարեանց Մ. 1895, Արցախ, Բագու, «Արօր» տպարան, 462 էջ:

Դիվան հայ վիմագրության 1982, պրակ V, Արցախ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, ԳԱ հրատ., 352 էջ:

Եսայան Հ. 1994, Տաուշ և Այգեձոր ամրոցների պեղումները և շքաղյուսների հարցը. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 1, էջ 164–171:

Եսայան Հ. 1999, Տաուշի միջնադարյան ջնարակած շինարարական խեցեղենը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 152–157:

Կարապետյան Ս. 2004, Հյուսիսային Արցախ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 616 էջ:

Կարապետյան Ս., Աբրահամյան Է., Հակոբյան Ա., Քորթոշյան Ռ., Մովսիսյան Գ., Հովհաննիսյան Հ., Գևորգյան Ա. 2013, Ոսկեպարի պատմական հուշարձանները, Երևան, ՀՃՈՒ հիմնադրամ, 42 էջ:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. 1986, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. 1991, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:

Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 572 էջ:

Ղաֆադարյան Կ. 2007, Պատմահնագիտական դիտողություններ Նոր-բերդի Կյուրիկյան իշխանության մասին. – էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, կազմել և հրատարակության է պատրաստել Ա. Քալանթարյանը, Երևան, «Գիտություն» հրատ., էջ 209–230:

Ղաֆադարյան Կ., Քալանթարյան Ա. 2002, Դվին II, Դվին քաղաքը և նրա պեղումները (1973–1980 թթ.) . – Հնագիտական պեղումները Հայաստանում, № 20, Երևան, «Գիտություն» հրատ., 254 էջ:

Մաթևոսյան Ռ. 1982, Տաշիր-Ջորագետ, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 156 էջ:

Յովհաննէսեան Մ. 1870, Հայաստանի բերդերը, Վենետիկ, Ս. Ղազար, 1014 էջ:

Շահնազարյան Ա. 1990, Վահրամյանների իշխանությունը, «Հայաստան» հրատ., 216 էջ:

Շահնազարյան Ա. 2004, Զաքարյան Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից. – ՊԲՀ, № 2, էջ 142–160:

Շահնազարյան Ա. 2017, Տավուշի Կյուրիկյան իշխանությունների պատմությունից. – «Էջմիածին» (Ս. Էջմիածին), Ժ, էջ 106–130:

Քարտաշյան Հ. 1993, Գետակիցք վանքը. – «Հուշարձան» (Երևան), Բ, էջ 104–110:

Չանգլյան Ի. 2011, Շամշադին: Պատմական տեղեկություններ, Երևան, «Եգեա» հրատ., 288 էջ:

Kalantaryan A., Karakhanyan G., Melkonyan H., Petrosyan H., Hakobyan N., Babayan F., Zhamkochyan A., Nawasardyan K., Hayrapetyan A. 2009, Armenia in the cultural context of East and West, Ceramics and glass (4th-14th centuries). Yerevan, «Gitutyun», 186 p.

## НАБЛЮДЕНИЯ ВОКРУГ ВОПРОСА ЛОКАЛИЗАЦИИ КРЕПОСТИ МАЦНАБЕРД

ТИГРАН АЛЕКСАНЯН

Резюме

*Ключевые слова: Мацнаберд, Тавуш, Айгедзор, Ахчкаберд, средневековье, памятник, раскопки, артефакты.*

Крепость Мацнаберд была одним из важных укреплений северо-восточных районов Армении. Средневековые историки неоднократно упоминали памятник без указания его местонахождения. Это обстоятельство вызвало разногласия среди исследователей. Некоторые из них (М. Оганесян, С. Бархударян, С. Карапетян) локализируют крепость за пределами Армении, на территории Азербайджана. По мнению других (Г. Алишан, А. Шахназарян, Г. Карташян, Р. Матевосян), крепость находится в регионе Тавуш Армении.

Исследования имеющихся данных приводят к выводу, что Мацнаберд – это Ахчкаберд близ Айгедзора. И помимо фактов, которые представляют исследователи, поддерживающие эту точку зрения, в пользу такой гипотезы говорят также наши исследования и результаты полевых работ.

1. Топоним «Ахчкаберд» сугобо народного происхождения и не имеет научного обоснования. Во многих регионах Армении существуют одноименные крепости, наименование которых связано с преданиями того же содержания.

2. В письменных источниках Мацнаберд всегда упоминается вместе с другими укреплениями региона, в частности крепостями Ергеванк и Тавуш. Последние расположены в бассейне рек Тавуш и Хндзорут и являлись одним из важных пунктов оборонительной системы региона. Упоминание крепости Мацнаберд среди вышеупомянутых укреплений дает основание предполагать, что он находился именно в данном регионе, играя важную роль в оборонительной системе.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 1

*Тигран Алексанян – научный сотрудник отдела средневековой археологии Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: археология средневековой Армении. Автор 1, соавтор 1 книги, 26 статей. ORCID:0000-0001-9971-1651; tigranalexanyan@yandex.ru*

## OBSERVATIONS ON THE ISSUE OF THE MATZNABERD FORTRESS LOCALIZATION

TIGRAN ALEKSANYAN

S u m m a r y

*Keywords: Matznaberd, Tavush, Aygedzor, Akhchkaberd, the Middle Ages, monument, excavations, artifacts.*

The Matznaberd fortress was one of the important fortifications of the north-eastern regions of Armenia. Medieval historians often mentioned the monument but without indicating its location. This circumstance has caused disagreements among researchers. Some of them (M. Hovhannisyan, S. Barkhudaryan, S. Karapetyan) localize the fortress outside Armenia, on the territory of Azerbaijan. According to others (G. Alishan, A. Shahnazaryan, G. Kartashyan, R. Matevosyan), the fortress is located in the Tavush region.

The study of the available data leads us to the conclusion that Matznaberd is the same as Akhchkaberd near the village of Aygedzor. In addition to the observations of the researchers, the results of our study on the theme and field works also speak in favor of this hypothesis.

1. The toponym “Akhchkaberd” is of folk origin and has no scientific basis. In many regions of Armenia there are similarly-named fortresses, the name of which is associated with legends of the same content.

2. In written sources, Matznaberd is always mentioned together with other fortifications of the region, in particular, the fortresses of Yergevank and Tavush. They are located in the basin of the Tavush and Khndzorut rivers and were one of the important points of the defensive system of the region. The mention of the Matznaberd fortress with Yergevank and Tavush fortresses gives reason to assume that it was located precisely in this region playing an important role in the defensive system.

*Tigran Aleksanyan – Researcher of the Department of the Medieval Archaeology of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests: archaeology of the medieval Armenia. He is the author and coauthor of two books and 26 articles. ORCID.ORG/0000-0001-9971-1651; tigran alexanyan@ yandex.ru*